ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(2024 - 25 ՈՒՍՏԱՐԻՆԵՐ)

27.06.2025թ.

«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը հերթական ամենամյա ուսումնասիրությունը առցանց հարցման միջոցով իրականացրել է մասնաճյուղի 2024-2025 ուստարվա «Գործարար վարչարարություն» մագիստրոսական ծրագրի **մագիստրատուրայի** շրջանավարտների շրջանում հարցում:

Հարցման նպատակն էր՝ պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, մագիստրոսական թեզերի պաշտպանությունից հետո՝ դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը:

2024 – 2025 ուստարում մասնաճյուղը հեռակա ուսուցման «Գործարար վարչարարություն» մագիստրոսական ծրագրով տվել է 09 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է 08-ը, որը կազմում է հարցվողների 89 %-ը, առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշը հետևյալն է.

Կրթական ծրագիր	Ուս. տարի	Ուսանող	Մասն.	Տոկոս
Գործարար վարչարարություն (կառավարում)	2025	9	8	89 %

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեն վերլուծելու շրջանավարտների գնահատականը ստացած կրթության, դրա արդյունավետության և ակնկալիքների ապահովման վերաբերյալ:

Հարցման արդյունքները ընդհանրացված են ըստ կրթական ծրագրի, միջին որակական գնահատականների, ներկայացված են միջին գնահատականով կամ տոկոսով:

Ներկայացնենք հարցման արդյունքները.

Հարցվածներից 63%-ը նշել է, որ ուսումնառության միջին որակական գնահատականը կազմում է 18-20 ինչը վկայում է գերազանց կամ շատ բարձր ակադեմիական արդյունքների մասին: Սա կարող է խոսել ինչպես ուսանողների պատասխանատու և արդյունավետ ուսումնառության, այնպես էլ կրթական գործընթացի կազմակերպվածության և աջակցող միջավայրի մասին: Միաժամանակ, 38%-ը նշել է 13–17 միջակայքը, ինչը նույնպես համարվում է բավարարից բարձր և կայուն առաջադիմություն:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնառության ընթացքում շրջանավարտների մեծ մասը ունեցել է բարձր առաջադիմություն, որը մատնանշում է կրթական գործընթացի արդյունավետությունը :



Աշխատանքային զբաղվածության հարցի վերաբերյալ արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտների 50%-ը աշխատում է, սակայն ոչ իր ստացած մասնագիտությամբ:

Սա կարող է ունենալ մի քանի բացատրություն.

- աշխատաշուկայի պահանջարկի և մասնագիտական պատրաստվածության անհամապատասխանություն,
- տվյալ ոլորտում թափուր աշխատատեղերի սահմանափակ քանակ,
- աշխատավարձային կամ կարիերայի աճի ավելի գրավիչ հնարավորություններ այլ ոլորտներում,
- անձնական նախասիրությունների փոփոխություն ուսումնառությունից հետո:

Միևնույն ժամանակ, փաստը, որ շրջանավարտների կեսը աշխատում է (թեև ոչ մասնագիտությամբ), վկայում է նրանց ընդհանուր մրցունակության և աշխատանք գտնելու կարողության մասին: Սակայն ցուցանիշը կարող է հիմք ծառայել մասնագիտությունների արդիականացման, գործատուների հետ համագործակցության ամրապնդման և պրակտիկ բաղադրիչի ուժեղացման ուղղությամբ բարելավումների համար:





Արդյունքներից երևում է, որ մասնակիցների մեծ մասը (մոտ 75%) իրենց գնահատել է առավելագույն՝ 5 միավորով, ինչը վկայում է մանկավարժական նոր մեթոդներին տիրապետելու բարձր ինքնագնահատականի մասին:
Միայն 2 մասնակից նշել են 4 միավոր, ինչը նույնպես բարձր ցուցանիշ է, բայց կարող է վկայել որոշակի զարգացման կամ հավելյալ պատրաստվածության կարիք: Ընդհանուր առմամբ, խմբի միջին գնահատականը 4.75 է, որը շատ բարձր ցուցանիշ է:



ՏՀՏ գործիքներին տիրապետման մակարդակ հարցի պատասխանները ցույց է տալիս, որ հարցմանը մասնակցածների մեծամասնությունը (63 %) ՏՀՏ գործիքներին տիրապետման մակարդակը գնահատում է առավելագույն՝ բարձր մակարդակով: Մնացած 38 %-ը ևս ունի բավականին բարձր տիրապետում, սակայն առկա է որոշակի կարիք հմտությունների խորացման և կատարելագործման: Ընդհանուր առմամբ, արդյունքները վկայում են, որ շահառուների ՏՀՏ կարողությունները գտնվում են լավ և բարձր մակարդակի վրա, ինչը բարենպաստ հիմք է թվային գործիքների ակտիվ կիրառման և նոր տեխնոլոգիաների ներդրման համար:

Ավելի լավ ցուցանիշներ ունենալու համար անհրաժեշտ է կազմակերպել խորացված ուսուցում կամ գործնական վարպետաց դասեր, որոնք կուղղվեն առաջադեմ ՏՀՏ գործիքների օգտագործմանը:



Մատուցվող դասընթացների և պրակտիկաների օգտակարության վերաբերյալ հարցման արդյունքները վկայում են ընդհանուր դրական գնահատականի մասին: Մասնակիցների 63 %-ը դասընթացների և պրակտիկաների օգտակարությունը գնահատել է լավ, իսկ 38 %-ը՝ միջին, ինչը ցույց է տալիս, որ առաջարկվող բովանդակությունը հիմնականում համապատասխանում է շրջանավարտների կարիքներին և ակնկալիքներին:

Միևնույն ժամանակ, հարցման արդյունքներով գործող գնահատման համակարգի օբյեկտիվությունը գնահատվել է 50 %, ինչը համեմատաբար ցածր ցուցանիշ է և կարող է դիտարկվել որպես մտահոգիչ ազդակ: Սա ենթադրում է, որ մասնակիցների մի մասի մոտ առկա է անվստահություն գնահատման գործընթացի արդարության կամ հավասար մոտեցման նկատմամբ: Դրական է այն հանգամանքը, որ գործող գնահատման համակարգի թափանցիկությունը գնահատվել է 63 %, ինչը վկայում է, որ գնահատման չափորոշիչներն ու գործընթացը հիմնականում հասկանալի և տեսանելի են մասնակիցների համար:

Անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել գնահատման չափորոշիչները, ապահովելով դրանց միատեսակ կիրառումը: Կարևոր է ուժեղացնել գնահատման օբյեկտիվության ապահովման մեխանիզմները, օրինակ՝ արտաքին գնահատողի ներգրավում:



Գրաֆիկի տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատման օբյեկտիվության վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն: 3 և 5 միավորների համար ստացված պատասխանների հավասարությունը ցույց է տալիս, որ հարցվողների մի մասը գնահատման գործընթացը համարում է բավարար կամ միջին մակարդակի, իսկ մյուս մասը՝ ամբողջապես օբյեկտիվ և դրական: Միևնույն ժամանակ, հարցվողների 25 %-ը գործընթացը գնահատել է 4 միավոր, ինչը վկայում է համեմատաբար բարձր, բայց ոչ լիարժեք բավարարվածության մասին: Ընդհանուր առմամբ, արդյունքները ցույց են տալիս, որ թեև գերակշռում են դրական գնահատականները, առկա է նաև վերապահված վերաբերմունք գնահատման օբյեկտիվության նկատմամբ:

Ստացված արդյունքների հիման վրա նպատակահարմար է իրականացնել գնահատման գործընթացի բարելավմանն ուղղված քայլեր, մասնավորապես՝

- հստակեցնել և հրապարակել գնահատման չափորոշիչները,
- ապահովել հանձնաժողովի անդամների գնահատման մոտեցումների միատեսակությունը,
- ներդնել հետադարձ կապի մեխանիզմներ՝ հնարավորություն տալով ուսանողներին ներկայացնել իրենց դիտարկումները:



Հարցման արդյունքները վկայում են, որ մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից բավարարվածության մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է: Հարցվողների մեծամասնությունը՝ 62,5 %-ը, գնահատել է գիտական ղեկավարի աշխատանքը 5 միավորով, ինչը ցույց է տալիս բարձր գոհունակություն և արդյունավետ համագործակցություն: Միևնույն ժամանակ, հարցվողների 12,5 %-ը տվել է 4 միավոր, ինչը ևս հաստատում է դրական գնահատականների առկայությունը: Սակայն ուշագրավ է, որ հարցվողների 25 %-ը գնահատել է 2 միավոր, ինչը մատնանշում է առանձին դեպքերում առաջացած խնդիրներ կամ գիտական ղեկավարի հետ համագործակցության ընթացքում դժգոհության առկայություն:

Ստացված արդյունքների հիման վրա նպատակահարմար է պահպանել և խթանել գիտական ղեկավարների արդյունավետ աշխատանքի առկա դրական փորձը, միաժամանակ ուշադրություն դարձնելով արձանագրված խնդիրներին: Մասնավորապես՝

- պարբերաբար կազմակերպել հետադարձ կապի հավաքագրում մագիստրանտների և գիտական ղեկավարների միջև,
- հստակեցնել գիտական ղեկավարի պարտականություններն ու պատասխանատվության շրջանակը:



Մասնաճյուղում առկա ռեսուրսներից ընդհանուր բավարարվածությունը բավարար է: Գրադարանի մասնագիտական գրականությունից բավարարվածությունը համեմատաբար ցածր է: Բարձր ցուցանիշներ ունենք լսարանայի վիճակի և գրադարանի ընթերցասրահի սպասարկումից 63%: Ցածր ցուցանիշներ ունենք համացանցի մատչելիությունից և էլեկտրոնային գրադարանի հարցերի վերաբերյալ:

«Որքանո՞վ եք գոհ մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերից և մեխանիզմներից» հարցի վերաբերյալ ստացված պատասխանների հիման վրա գրաֆիկը ունի հետևյալ տեսքը:



Բերված գծապատկերների վերլուծությունից ակնհայտ է, որ ուսումնառության գործընթացի մի շարք բաղադրիչներ գնահատվել են բարձր, ինչը վկայում է համակարգի ընդհանուր արդյունավետության մասին: Միևնույն ժամանակ, ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերի մեխանիզմները համեմատաբար ցածր են գնահատվել՝ կազմելով 68 %: Սա ցույց է տալիս, որ տվյալ ոլորտում առկա են թերացումներ կամ բավարար տեղեկացվածության և հասանելիության խնդիրներ:



Հարցին արդյոք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք) նշվել է, որ ոչ: Տվյալ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնառության ընթացքում դրամի դիմաց գնահատական (ստուգարք) ստանալու դեպքեր չեն արձանագրվել: Սա վկայում է կրթական գործընթացում ակադեմիական ազնվության և արդարության սկզբունքների պահպանման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի բացակայության մասին:



Ուսումնառության ընթացքում մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով հարկադրված վճարելու վերաբերյալ հարցին հարցվածների 100%-ը նշել է, որ նման դեպքեր չեն արձանագրվել: Ստացված

արդյունքները վկայում են կրթական գործընթացում արդարության, ակադեմիական ազնվության և գնահատման մեխանիզմների թափանցիկության բարձր մակարդակի մասին:



«Ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ ԻՄ-ում ստացած Ձեր կրթությունը» հարցի պատասխանները ցույց են տալիս ընդհանուր բարձր գնահատականների գերակշռություն: Մասնավորապես, հարցվածների 62.5%-ը կրթությունը գնահատել է «5» միավորով, իսկ 37.5%-ը՝ «4» միավորով: Ցածր գնահատականներ («3» կամ «2») չեն արձանագրվել, ինչը վկայում է, որ կրթական գործընթացի որակը հիմնականում բավարարում է ուսանողների սպասելիքները: Այս արդյունքները փաստում են ԵՊՀ ԻՄ-ում կրթության որակի բարձր մակարդակի, դասավանդման արդյունավետության և ուսանողների ընդհանուր բավարարվածության մասին՝ միաժամանակ ցույց տալով կայուն և դրական կրթական միջավայր:



Հարցման արդյունքների համաձայն՝ շրջանավարտների 100%-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում: Այս ցուցանիշը վկայում է շրջանավարտների լիակատար բավարարվածության, վստահության և դրական փորձառության մասին, որը նրանք ունեցել են ուսումնառության ընթացքում:

Նման միաձայն գնահատականը խոսում է կրթական գործընթացի որակի, դասավանդման արդյունավետության, մասնագիտական կարողությունների ձևավորման և կրթական միջավայրի նկատմամբ բարձր վստահության մասին: Բացի այդ, սա կարևոր ցուցիչ է նաև բուհի հեղինակության և հանրային ընկալման տեսանկյունից, քանի որ շրջանավարտների պատրաստակամությունը՝ խորհուրդ տալու բուհը, հանդիսանում է ինստիտուցիոնալ որակի և կայուն զարգացման նշանակալի վկայություն:

Ընդհանուր առմամբ, արդյունքը հաստատում է, որ ԵՊՀ ԻՄ-ը շրջանավարտների կողմից ընկալվում է որպես վստահելի և արդյունավետ կրթական հաստատություն, որը բավարարում է թե՛ կրթական, թե՛ մասնագիտական ակնկալիքները:

Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի **երեք հիմնական ուժեղ կողմեր**, ըստ ստացված պատասխանների հաճախականության, նշվել են.

- գերազանց ընտրված պրոֆեսորադասախոսական կազմ,
- անաչառ և ԲՈՒՀ-ի համար սրտացավ ղեկավարություն,
- ռեյտինգը և տրված է իսկապես գերազանց որակի բարձրագույն կրթություն:

Շրջանավարտների կողմից մասնաճյուղի թույլ կողմեր չեն արձանագրվել: Սա վկայում է, որ հարցմանը մասնակցած շրջանավարտները ընդհանուր առմամբ գոհ են մասնաճյուղի գործունեությունից և չեն առանձնացրել էական խնդիրներ կամ բացթողումներ: Նման արդյունքը խոսում է բարձր գնահատականի, դրական փորձի և հաստատության նկատմամբ վստահության մասին:

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին